ՍՈՒՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Մեր հանրապետության փիլիսոփայական գիտությունը ծանր կորուստ կրեց. ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում կյանքից հեռացավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության ամբիոնի վարիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Հարությունի Ավետիսյանը։



Ս. Հ. Ավետիսյանը ծնվել է 1932 թ. փետրվարի 6-ին, Աշտարակի շրջանի Օհանավան գյուղում։ 1954 թ. ավարտել է Երևանի պետհամալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը՝ աստղագիտություն մասնագիտությամբ։ Երեք տարի որպես մաթեմատիկայի ուսուցիչ աշխատելուց հետո սովորել է ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության սեկտորի ասպիրանտուրայում։ 1962 թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա։ 1960 թվականից նա գիտական աշխատանք է կատարել փիլիսոփայության և իրավունքի սեկտորում, 1966 թվականից աշխատել է Հայկական հեռակա մանկավարժական ինստիտուտում որպես ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, բարձրագույն երկրաչափության և հանրահաշվի ամբիոնի դոցենտ, ինստիտուտի պրոռեկտոր։ 1969—1972 թթ. եղել է ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի գիտական քարտուղարը։ 1971 թ. Ս. Հ. Ավետիսյանին շնորհվել է փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, 1974 թ.՝ պրոֆեսորի կոչում։ 1972 թվականից Ս. Հ. Ավետիսյանը ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության ամբիոնի վարիչն էր։

Պրոֆեսոր Ս. Հ. Ավետիսյանը բնագիտության փիլիսոփայական հարցերի խոշոր մասնագետն էր մեր հանրապետությունում։ Նրա գրչին են պատկանում շուրջ հիսուն գիտական աշխատություն՝ նվիրված գլխավորապես իմացաբանության, տրամաբանության, մաթեմատիկայի հիմնավորման հարցերին։ Գիտական հասարակայնության շրջանում նրան լայն ճանաչում բերեցին հատկապես «Տարածության և ժամանակի պրոբլեմը հարաբերականության տեսության լույսի տակ», «Մաթեմատիկան և իրականությունը», «Մաթեմատիկական տրամաբանության հիմնական տարրերը», «Իմացաբանականի և տրամաբանականի հարաբերակցությունը մաթեմատիկայում» գրքերը, որոնք մնայուն արժեքներ են մեր փիլիսոփայական մշակույթի մեջ։ Գիտության և մշակույթի առնչություններին, գիտնականի հասարակական կոչման խնդիրներին նվիրված նրա հոդվածները տոգորված են քաղաքացիական մեծ պաթոսով։ Նրա գիտամանկավարժական գործունեության մեջ առանձնահատուկ տեղ էր գրավում ասպիրանտների հետ կատարած աշխատանքը։ Նրա անմիջական ղեկավարությամբ գիտական աստիճաններ են ստացել բազմաթիվ երիտասարդ գիտնականներ։ Ս. Հ. Ավետիսյանը գիտության անխոնջ պրոպագանդիստ էր, ակտիվորեն մասնակցում էր հասարակական-քաղաքական կյանքին՝ ցուցաբերելով բարձր գաղափարայնություն և կուսակցական սկզբունքայնություն։ Լայն հասարակայնությանը նա հայտնի էր որպես «Գիտության աշխարհում» հեռուստատեսային հաղորդաշարի հեղինակ և հաղորդավար։ Մեծ նվիրումով նա մասնակցում էր «Հայկական սովետական հանրագիտարանի» ստեղծմանը։

Կոմունիստ գիտնականի, աղնիվ քաղաքացու, անզուգական ընկերոջ հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում։

ՀՍՍՀ ԳԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀՍՍՀ ԳԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ